

**«Օտարը մեզ չի կարող սպանել. մի տեսակ մահ կա հայի համար՝
ինքնասպանություն»**

Սարգսյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

EDN: ZBHSKZ

«Եթե մարդիկ ունեն պատվի զգացում, մեծ պետությանը դա բավարար է մարտնչելու, փոքր պետությանը՝ պաշտպանվելու համար»:

«Կռվելով հաղթելը դյուրին է, պաշտպանվելով հաղթելը՝ դժվար»:

Ու-գզի

Ցանկացած ժողովուրդ ունի անցյալ, փորձում է ամրապնդվել օրերի հետ և կերտել իր ապագան: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն էթնոսներից է և հազարամյակների պատմություն ունի: Սակայն միշտ չէ, որ հայերի բախտը բերել է: Համաշխարհային քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվող Հայոց բնօրրանն ու նրա անփոփոխ բնակիչներ հայ ժողովուրդը մշտապես գրավիչ կռվախնձոր են եղել աշխարհի հզորների համար: Հենց դա է պատճառը, որ հնագույն քաղաքակրթությունների գոյաժամանակներից սկսած մինչև մեր օրերը, բոլոր ժողովրդական պայքարների արդյունքում առաջացած վայրենի ու կիսավայրենի ավարառուներն ու նվաճողներն «անցել են» Հայկական լեռնաշխարհի վրայով: Ընդ որում, եթե ակադաշումերական, ասորախեթական, հռոմեաբյուզանդական, իրանական, արաբական, թյուրքական, թաթարմոնղոլական, սելջուկյան, թուրքօսմանական վայրենի ու կիսավայրենի հրոսակները գալիս էին, թալանում ու ավերում բացահայտ, ապա ռուսական ու եվրոպական «եկվորները» մուտք էին գործում ավելի հաճախ ազատարարի, Հայկական հարցը լուծելու պատրվակով և ինքնավարություն ու անկախություն նվիրաբերողի քողի ներքո:

Տարբերությունն այնքան էլ մեծ չեղավ, քանզի այդ ամենի արդյունքում հայկական պետականությունն ու ցեղասպանված հայ ժողովուրդն ստիպված եղան կծկվելու անչափ փոքրիկ մի հողակտորի վրա, որն այսօր կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Այդ փոքրիկ տարածքում մի կերպ հարմարված հայ ժողովուրդը դարձյալ փորձում է բարիքներ արարել, ավաններ շենացնել, կիրթ ու բանիմաց սերունդ դաստիարակել ու հայտնագործություններ կատարելով համաշխարհային հանրության հետ համաբայլ՝ յուսավոր ապագա կերտել: Բայց արի ու տես, որ այդ ասպարեզներում արձանագրած հաջողություններն ու հայի կենսականությունը՝ ինչպես նախորդ դարերում, այսօր էլ հանգիստ չի տալիս մեր թուրք ու թուրքաբարո հարևաններին: Այդ պատճառով էլ գիշեր ու ցերեկ նրանք մտորում են, թե ինչպես կույ տան Հայոց պետականությունը և իսպառ բնաջնջեն հայության մնացյալ մասին: Եվ այդ ամենը չափազանցություն չէ, այլ ամենօրյա կիրարկվող գործընթաց:

Իսկ մե՞նք: Ի՞նչ ենք անում մենք այդ ամենին դիմադարձելու, հակազդելու համար...

Դաժան ճակատագրի, կրած բազմաթիվ մահացու հարվածների, ցեղասպանվելու, թույլ տված անհամար սխալների և քանի որ **թուլության համար մենք շատ էինք ուժեղ, ուժեղ էինք նաև ուժի հանդեպ, բայց արի ու տես՝ թուլություն ունեինք թույլերի դեմ ուժեղ չինել** ուրիշների հանդեպ և ավելի հաճախ չպատճառաբանված վստահելու արդյունքում հայտնվեցինք այնպիսի պարադոքսալ (իրավիճակ, որը կարող է լինել իրականում, բայց տրամաբանական բացատրություն չունի) և տխուր իրավիճակում, երբ՝

1. Մայր հայրենիքում բնակվում է ժողովրդի ընդամենը մեկ հինգերորդ մասը,
2. Աշխարհում հայերին պատկանող կապիտալի շատ չնչին մասն է տնօրինվում հայոց պետականության կողմից (որոշ չճշգրտված տվյալներով՝ 2-3 տոկոսը),
3. Շատ ավելի տխուր է կացությունը մտավոր պոտենցիալի և, առհասարակ, ժողովրդագրության աճի դեպքում,
4. Որևէ համեմատություն քննություն չի բռնի նաև բանկային, հատկապես՝ փոխառվական և արդյունագործական ասպարեզների համեմատության դեպքերում,
5. Նույն իրավիճակն է նաև գեղարվեստի՝ նկարչության, երաժշտության, մամուլի, կինոյի, հեռուստատեսության և այլ կարևոր ասպարեզներում:

Իսկապես, եթե մի պահ պատկերացնենք, որ հրաշքով հավաքվեն, համախմբվեն ու մեկտեղվեն հայերին պատկանող աշխարհի բոլոր ֆինանսական ու նյութական միջոցները, գիտնականները,

տարբեր երկրների բանակներում ծառայող հայ ռազմիկները, տարբեր լեզուներով ստեղծագործող գրողները, երաժիշտներն ու քաղաքագետները, տարբեր ասպարեզներում իրենց քրտինքով հանապազօրյա հաց վաստակողները, ապա հազիվ թե որևէ ուժ կարողանա արգելք դառնալ մեր թոփափային աննախադեպ զարգացմանը: Սակայն, ավաղ, դա երազ է, մոտ ժամանակներում անիրականանալի երազ, քանզի **քաղաքականությունը ջրհեղեղի նման է, ավերում և խառնում է մարդկային ուղեղը, հոգին, խիղճը և ճահճանում կեղծիքով:**

Սակայն մայր հայրենիքում դա լիովին հնարավոր կլինի, եթե... Եթե հայ ժողովուրդը բաղկացնող բաղադրիչները հաշտ լինեն ու համախմբված: Իսկ այդ բաղադրիչներն են՝ ա) հայեցի հոգեկերտվածքը, բ) հայաստանաբնակ հայությունը, գ) սփյուռքը, դ) Հայոց պետականությունը, որպես այդ բոլորին շաղկապող պորտալար ե) Հայաստանյաց առաքելական եկեղեցին, զ) ազգային մշակույթը, գրականությունը, արվեստը: Իսկ արդյո՞ք հաշտ են ու համախմբված: Միանշանակ՝ ոչ: Առհավատցյան այս օրերին Հայրենիքում և Սփյուռքի շատ գաղթօջախներում ընթացող բողոքի ակցիաներն են, որոնք այս անգամ առանձնանում են նրանով, որ առաջնորդը բարձրաստիճան հոգևորական է:

Ինձ և մտերիմներիս հաճախ է տանջում հարցերի հարցը՝ իսկ ինչու՞ միակամ չենք, ինչու՞ միասնական չենք և թույլ ենք տալիս մեր թշնամիներին օգտվել դրանից ու օրը ցերեկով ցեղասպանել, հայրենագրել ու նվաստացնել մեզ, զենքով և առանց որևէ կրակոցի մեզանից խլել մեր հայապատկան հողերն ու արժեքները: Մեզ եկվորներ հայտարարելով՝ անթաքույց սպառնալ սեփականել նաև մեր բնօրրանը: Իսկապես, ինչու՞ միակամ չենք արդեն ավելի քան երկու հազար տարի: Հարց, որին շատերն են փորձել պատասխանել: Հարց, որի պատասխանը գտնելն ու ճիշտ եզրակացությունների հանգեղը, վստահ եմ, կօգնեն վերջապես դուրս գալու այս համազգային ճգնաժամից և կերտելու մեր լուսավոր ապագան: Չերձ լինելով վերջնական ու բացարձակ ճշմարիտ լինելու հավակնությունից՝ ինքս էլ կփորձեմ պատասխանել:

1. Տարածաշրջանային գործոն՝ հազարմյակներ շարունակ գտնվել ենք արևելք-արևմուտք շահերի բախման կիզակետում:

2. Ծակատագրի բերումով մեզ հարևաններ են դարձել միայն թալանով ու ավարառու կենցաղով քոչվոր հրոսակներ:

3. Ազգային միասնական գաղափարախոսության չզոյությունը:

4. Կիսավայրենի ու միայն ռազմուժով պատրաստի արժեքները յուրացնելու սովոր հարևանների շրջապատում հեզ ու խոնարհ պահվածք քարոզող քրիստոնեությունը, բացառությամբ որոշ դեպքերի, որպիսին էր օրինակ 1918 թ. մայիսին կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոչը հայ ժողովրդին՝ «Հասել է պահը պատմական, որպեսզի յուրաքանչյուր հայ հայրենիքի խորանի առջև դնի իր մեջ եղած լավագույնը: Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որը գալիս է ծարավ մեր վերջին արյունին», չքարոզեց «ատամն ընդ ատաման», այլ առաջարկեց մյուս երեսին էլ ապտակ թույլատրելու ոչ ճիշտ դրույթը: Այդ ամենով հանդերձ, մի դիտարկում ևս: Քանի որ չզոյության ընթացքում եկեղեցին էր փոխարինում պետականությանը և պետության գործառույթներ իրականացնում, դա էլ խրտնեցրել մեր «բարեկամներին» և նրանք ցանկանալով մահացու հարված հասցնել Հայոց ազգային հիմքերին և ճնշել հայ ժողովրդի դիմադրական ոգին, միշտ ձգտել են հարվածել հայ ժողովրդի արժեքաբանական կարևորագույն տարրերից մեկը հանդիսացող Հայ Առաքելական եկեղեցուն: Այս ճանապարհին երբեմն գործի դնելով նաև որոշ հայերի ջանքերը, որոնք, հաճախ տարված լինելով «առաջադեմ» գաղափարներով, ելույթ են ունեցել Հայ Առաքելական եկեղեցու դեմ: Օրինակ՝ չկողմնորոշվող պատմաբան Լեոն, որը ձգտելով դուր գալ բոլշևիկյան իշխանություններին, սկսեց պայքարել եկեղեցու դեմ: Կամ Ադոնցը, որը 1904 թ-ին, երբ ցարական իշխանությունները բռնագրավվում էին Հայ Առաքելական եկեղեցու ունեցվածքը և ձգտում էին ճնշել հայերի ազատագրական պայքարը, փորձեց քննադատել եկեղեցուն: Այդպիսի անհաջող փորձ էր նաև մերօրյա ստեղծագործող Համլետ Դավթյանի «Մեծն Վասակ Սյունի» կեղծ-գիտական աշխատանքը և այլն:

5. Ավելի ուշ դարերում՝ միայնակ չկարողանալով դիմակայել եկվոր վայրենաբարո ցեղերին, երկրի տարբեր մասերում ու տարբեր հակումներ ունեցողներն սկսեցին ազգի փրկությունը որոնել ի դեմս այս կամ այն հզոր հարևանի օգնության: Սա էլ իր հերթին հայոց մեջ առաջացրեց ու արմատավորեց **հատվածականություն** խիստ վնասակար երևույթը, որն այսօր էլ թունավորում, տարափեղկում և նույնիսկ թշնամացնում է հասարակության անդամներին:

6. Դարերի ընթացքում կենցաղ դարձած խոնարհվելու, ստրկաբարո մտածելու և այդ վիճակից դուրս գալու փորձեր անելով ու պարտվելով՝ հարմարվելու հոգեկերտվածքի արմատավորումն ու գոյությունը:

7. Դարեր շարունակ սեփականը չունենալու հետևանքով իշխանություն և օրենք չսիրելու, դրանք խախտելու համար մշտապես սողանցքներ փնտրելու հակումները հանգեցրել են նաև

սեփական պետականությունն ու օրենքները շրջանցելու և երբեմն նույնիսկ ասելու արատավոր սովորույթը:

8. Միմյանց չսիրելու, բամբասելու, նախանձելու, զգվռտվելու բացասական սովորույթները, որոնք՝ «բաժանիր որ տիրես» մտայնությամբ նենգաբար ներարկվել են օտար իշխողների կողմից, այսօր էլ կան և արմատախիլ արված չեն: Իրավացի է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իսկապես **օտարը մեզ չի կարող սպանել. մի տեսակ մահ կա հայի համար՝ ինքնասպանություն:** Եթե երբևէ մեզանից պակասի հավատքը, գիրը, լեզուն, հայրենիքին ծառայելու ոգին, մեր ինքնության դրոշմը եղող արժեքները և դեպի հավերժական կյանք տանող, ուժ ներշնչող գաղափարները, այն ժամանակ մենք կլինենք մեռյալներ՝ կյանքի, ապրելու մեջ մեռյալներ:

Իսկապես, խորհելու, փնտրելու և ստեղծված ծանր կացությունից դուրս գալու ճանապարհներ գտնելու անհրաժեշտությունը կա, որին պետք է զինվորագրվենք բոլորս...

Տժանա / Հանձնվել է՝ 16.06.2024

Рецензирована / Գրախոսվել է՝ 18.06.2023

Принята / Ընդունվել է՝ 20.06.2023